Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Խ. ԱԲՈՎԵԱՆԻՆ *)

V

Սիրելի Ապովեան!

Զսակաւատող նամակ քո գրեալ 'ի 8 փետր. ստացայ 'ի բարերարէ քումմէ Պարբօտայ 'ի 24 Ապրիլի, բայց թէ ընդէ՞ր այսչափ անագան, չգիտեմ. միայն այսքան ինչ լուայ 'ի նմանէ իբրև խնդիր ներողութեան «զի նամակք վեց 'ի միասին ժամանեալ առ նա 'ի քէն» և այլ ոչինչ, եթէ հանգամանք որպէս քո նոյնպէս և իմ չներեցին մեզ յաւուր ելիք քոց 'ի Դերպտոյ բարեաւ մնա ասել միմեանց, այդ չէ պարտ որպէս քեզ զինէն, նոյնպէս և ինձ զքէն տալ կարծիս ինչ վատ. զի և ըստ իմ դատողութեան, չիք ինչ պատճառ այդպիսի վիրաւորութեան 'ի լինելն մեր տեղեակ զբաղմանց իրերաց յաւուր յայնմիկ՝ յորում ես ունէի կատարել զէքզամէն իմ 'ի Ցոյն լեզուի. դու պատրաստէիր զքեզ առ ուղի քու Ցոյս իմ լինել արքունի աշակերտ բժշկականութեան չել 'ի կատար առ իմոյ վատաբաղդութեան, բայց և այնպէս ոչ եբէկ զզօրութիւն հոգւոյ իմոյ. երևի թէ բազումք և արդէն հին ստուդենտք տուեալ էին խնդիրս յայսմ մասին, որք վասն և ունէին իրաւունս առ այդ աւելի քան զայս։ Տեղեկացեալ իմ 'ի վերջ յունվար ամսոյ զգործելոյն իմոյ արքունի աշակերտ բժշկականութեան, բարւոք համարեցայ բարեաւ մնա ասել բժշկականութեան և ձեռնարկ եղէ 'ի պատաղումն զհին լեզուօք՝ յուսով առ 'ի ընդունիլ իբրև արքունի աշակերտ պէտաղոգեան սեմինարիոյ Դերպտոյ 'ի սկիզբն երկրորդ զէմեստրի այսր ամի, ուր 'ի մնալն իմ յարուեստի բժշկականութեան պարտ էր ինձ ամ մի ամբողջ ապրիլ անդրամ, զի գիտելի է, միմիայն յիւրաքանչիւր ջրօրհնէս հնար է մատուցեալ խնդիր գործիլ աշակերտ բժշկականութեան, բայց լեզուաբանական, պէտաղոգեան սեմինարիոյ 'ի սկիզբն իւրա-

---

*) Տես «Մուրճ», № 1.

քանչիւր սեմեստրի եթէ գոյ վկանցիա։ Մեծաւ տնտեսութեամբ պարտ եղև ինձ անցուցանել և զայս սեմեստր. մերձ առ 100 ռուբլի ստացայ 'ի պարգև 'ի Զամէն պրոֆէսսորէ 'ի ձեռն աղնուական կնոջ Լեդերարի. 60 տուեալ վասն սենեկի իմոյ, հազիւ կարացի լցուցանել զիմ կարիս, թէև ամենախքատ եղանակաւ, մնացեալ 40 ռուբլովն։ Ո՛չ 'ի վաղուց հետէ սկիզբն արարի ճաշել առ աղնուական տիկինն Ղրիւնվալդ երկիցս 'ի Շաբաթու, թէպէտ 'ի վաղուց հետէ առ կինն ֆօն Կէյզէր մի անդամ 'ի Շաբաթու և առ Բուշ պրոֆէսսորն. Արդէն 'ի քանի մի շաբաթուց հետէ ճաշեմ նոյնպէս երկիցս առ պրոֆէսսոր իրաւաբանութեան Ռէյց և առ կինն ղրէֆին Օրուրկ, այն է ամուսին եղբօր կնոջ ֆօն Շվետի, միանգամ. կինն Ղրիւնվալդ, Օրուրկ չուտեցեն շուտով յագարակն և մնացեն անդ գոնեայ զամառն բոլոր, Ռէյցն երթայ 'ի Գերմանիա և մնացէ անդ ըստ ասից իւրոյ ամիսս 5. միմիայն կինն Կէյզէր և Բուշ մնան ատ՝ առ որս հնար էր ինձ ճաշել յամառան, եթէ ես ևս մնայի 'ի քաղաքի։ Իմ յառաջադրեալ է նոյնպէս ելանել յագարակ, բայց ոչ անդ՝ ուր էի 'ի ձմեռան, թէպէտ ստացեալ է իմ արդէն հրաւիրումն և եկեսցեն վասն իմ երիվարք, այլ առ պարոն Առնոլդ ազգական ֆօն Շվէտի 'ի Տիւրպասլ անուն գիւղ նոցա. բայց ոչ այնու դիտաւորութեամբ զի տացից ինձ հանգիստ, այլ առ 'ի անդորր ևս կարացից նախապատրաստել զիս առ երկրորդ էքզամեն իմ միմիայն 'ի հին լեզուս, որոց բաւական տեղեկութիւն պահանջի անհրաժեշտ առ մուտս իմ 'ի Թիւ արքունի ֆիլօլօղաց. զի՞նչ պիտոյ է առնել անդ՝ ուր ամենուստեք հալածեն զիս կարիք և աղքատութիւն. ազգականք իմ և բարեկամք, աւաղ. այսոքիկ բառք են միայն հողմաձայնք, չկամին գիտել, կեամ դեռ արդէն, թէ խլեաց զիս արդէն յաշխարհէ մահ յաղքատութենէ. միմիայն ինձ մնաց, ինձ աշխատիլ վասն գտանելոյ ինձ յօտար աշխարհի ապրուստ կենաց և միջոց ուսման։ Մի յուսահատեր սիրելի՝ թէ ամենայն գեղեցիկ դիտաւորութիւնք մտաց քոց զայս դառնութիւն վիճակի ինձ պատրաստեցին. ես, մինչդեռ շունչ իմ 'ի բերան է, տարայց ամենայնի անտրտունջ և անմռունչ. ես՝ որ քաջածանօթս եմ զգեղեցիկ առաջադրութեանց մաքուր մտաց քոց. թողցուք զի ժամանակն արդարացուսցէ զքեզ յաչս կարճատես մարդկան և հանցէ զաշխատանս իմ յերևան արանց բանագիտաց. նոյն խնդիր է իմ 'ի քէն զի գրեսցես առ իս որչափ հնար է յաճախ. այդ օգտաւէտ է յոյժ մեզ երկոցունց և հաղորդեսցես ինձ մի ըստ միոջէ զամենայն ձեռնարկն քո և զարժանածանօթ գիտելիք այտի կողմանց։ Իմ գրեալ է արդէն 'ի ռուս լեզու առ

Սողոմոն Տէր Ղուկասեանց հայրենասէր բժիշկն զհանգամանաց իմոց. և խնդրեալ ոչ ուղղակի, այլ քաղաքավար յառաջարկութեամբ, դրամ վերադարձի իմոյ 'ի Տփխիս՝ եթէ անհընար էր մուտք իմ 'ի Թիւ արքունի աշակերտաց, չգիտեմ զիմբրդ թուի քեզ այս. կամ զինչ քո կարծիք են ընդհանրաբար։ Ցիրաւի եկեալ մի անդամ յԵւրոպա պարտ է աշխատիլ ուսանիլ որչափ հնար է ընդունակութեան իմում. բայց զինչ առնելի է 'ի պակասիլ ամենայն միջոցաց որպէս առ այդ նոյնպէս առ երկարութիւն կենաց։ Կուրատոր համալսարանի մերոյ է այժմ Քռաֆթշթրօմ շվեդ ազգաւ, սիրող յոյժ արտաքին բարեկարգութեանց. ազատութիւն ուսանողաց փոքրանայ աստ սակաւ առ սակաւ 'ի ձեռն կատաղաբարոյութեան իւրեանց. Վանդօֆուր ստուդենտն հանեալ է 'ի թուոյ ուսանողաց 'ի Համալսարանին և այլ բազումք՝ որք անպարկեշտ տօնեալ էին զտօն հիմնարկութեան համալսարանին։ Տիկինն Դոմբերդ խնդրեաց յինէն հարցանել 'ի քէն, չէ՞ արդեօք առեալ քո ընդ քեզ զաղօթագիր նորա հանդերձ մակագրութեամբ „Rigisches Gebetbuch" *) զոր ստացեալ է նա առ յիշատակի ծնողաց իւրոց, զոր ցանկայր վերստին ստանալ 'ի Դորպատ. որոնկն 'ի մէջ գրեանց, գուցէ 'ի շտապման քում յաւուր ելից քոց 'ի Դերպտոյ և զան աղօթագիր առեալ է քո ընդ քեզ։ Զթուղթ քո առ օրիորդն Սոկոլովսկի հասուցի նմա և ողջունեցի զամենասեան 'ի քոյ դիմաց. Կէյզէր կինն և որդի նորա ողջունեն ըզքեզ յոյժ յոյժ. ներեա սիրելի զի կնքեմ զթուղթ իմ այսպէս փութով և իմ ժամանակ թանգ է այժմ, մանաւանդ որ ամենայն առնելի է ինձ առ 'ի ելանել 'ի տառապանաց աստի. առ ապայն յուսամ քեզ բանս ուրախաբերս հաղորդել, եթէ տացէ Տէր կատարումն բաղձանաց իմոց։ Մնա այժմ բարեաւ և մի մոռանար զբարեկամ քո ճշմարիտ

զՍտեփաննոս Նազարեանց.

'ի 2 Մայիսի 1836.
'ի Դորպատ։

VI

'ի 21 հոկտ. 1836. 'ի Դերպտ։

Թանգագին Եաչատուր իմ։

'Ի 17 հոկտեմբեր ամսոյս ստացայ 'ի Մոսկովայ զթուղթ

*) Ռիգայի աղօթագիրք։

քո՝ գրեալ առիս 'ի 16 մարտի՝ հանդերձ 275 ռուբլի թղթադրամովք և թէ ընդէր այսչափ անագան, չհասկանամ բնաւ. վասնզ և զոհութիւն Տեառն և շնորհակալութիւն առ 'ի սրտէ ամենայն բարերար անձաց՝ որ օգնեն կարեաց անօգնականաց։ Թուղթ քո և բանք աղնուասիրտ պարոն Դիլանովին շարժեաց զիս յոյժ. ես գրեցի առ նա թուղթ շնորհակալութեան և ծանօթութեան որպէս և առ բարերար իշխանն Մեսրովպ Երևանցուն. կարծիք ամենեցուն զքէն՝ զոր կամէիր գիտել լաւ են յոյժ. զողջոյնս քո հասուցի փութով՝ առ որս պարոն էր. նորութիւն ինչ 'ի Դորպատ վասն վիճակի իմոյ դեռ չիք և ոչ մի 'ի բաց առեալ զայն՝ զի վրացի ոմն Զուբալով անուն դոկտոր բժշկականութեան եկեալ է 'ի Լեփցիխայ կամի պատրաստիլ զանձն առ վերստին էքսամէն իւր յաստի համալսարանի, զի դու գիտես, զի դոկտորք Գերմանիոյ վերստին հարցաքննին աստ։ Այս այր բարեսիրտ, քանքարաւոր և ժրաջան աւարտեալ է զընթացս ճեմարանի իւրոյ 'ի Լեփցիխ որպէս և զհամալսարանի, ունի զայն մտածութիւնն զաշխարհէ իւրմէ՝ զոր դու և ես. պատմէ ինձ բազմիցս զիրաց մերայնոց և ծիծաղի. սա լեալ է նոյնպէս 'ի Լոնդոն և 'ի Փարէս քաղաքի. խօսք գերմաներէն, ֆրանսերէն լատիներէն և այլն. Ահա առաքեմ քեզ զերիս Porzelanpfeifenköpfe *) առ իմոյ յիշատակի. գիտելի է՝ զի ես դիտաւորութեամբ չգնեցի քեզ և զներքին մասունս der Pfeifenköpfe, նոքա են ասա նոյնպէս 'ի պօրցելանէ և բեկանին շուտով. այդր հնար է տալ շինել զներքին մասն 'ի մեսխինդէ որ ոչ բեկանի բնաւ 'ի մուծանելն զներքին ծայր չիբուխին 'ի լայնագոյն ծաղն, որպէս և ծայր պօրցելան չիբուխին 'ի միւս ծաղն. գրեալ քեզ արդէն բաղումս, կամ և մնամ վախճանի և հետևանաց խնդրոյ իմոյ 'ի Տէրութենէ. զոր ապա ազդ արարից քեզ.

Քո Ստեփաննոս։

VII

Իմ թանգագին Ապովեանց! **)

Ես քեզ մի լուր կը հաղորդեմ, որ քեզ անասելի կ'ուրախացընի. իմ ցանկութիւնը, թէև ոչ բոլորովին, գոնէ մասամբ կատարուած է։ Բարեհոգի կառավարութիւնը որոշել է ինձ տարե-

*) Չիբուխի յախճապակեայ գլուխ։

**) Գերմաներէն բնագրից թարգմանել է պ. Գ. Աբովեանը։

Խմբ.

կան 500 բուբլի թոշակ պարոն կուրատոր Կրաֆտշտրոմի միջնորդութեամբ. սրա համար ես ոչ մի պարտականութիւն չեմ առնում ինձ վրայ թագի վերաբերմամբ, բայց եթէ ուսումս լրացնելուց յետոյ ծառայել իմ հայրենիքին, եթէ նա գոյութիւն ունի՝ որպէս ուսուցիչ։ Պրոֆեսսոր Բլումէն, որին ես այս բոլորի համար պարտական եմ, կամենում էր կրկին անգամ միջնորդել կուրատորին, որպէսզի, եթէ կարելի է, մի քանի հարիւր բուբլի կառավարութիւնից ստանայ գրքեր գնելու համար, ես դեռ ևս սպասում եմ այս առաջարկութեան յաջողութեանը։ Որքան ժամանակ ես կարող եմ այստեղ այս միջոցներով ուսանիլ, յայտնի չէ, ինչպէս կուրատորից լսեցի։ Ես կարծում եմ գուցէ 4 կամ 5 տարի, որովհետև ինչքան երկար, այնքան լաւ։ Ես չգիտեմ, թէ ինչպէս կը հաւանես դու իմ ընտրութիւնը այն առարկաների վերաբերմամբ, որոնցով ես պիտի պարապուեմ։ Ես վճռել եմ իմ աշխատանքս գլխաւորապէս պատմութեան վրայ դարձնել և դրա մէջ, ինչպէս հարկն է, կատարելագործուել։ Դու գիտես թէ ինչքան օժանդակ գիտութիւնների հետ է կապուած այս ճիւղը, առանց այդ բոլորը քեզ թուելու։ Նոր լեզուներից ես զրաղմունքի առարկայ կը դարձնեմ ռուերէնը և ֆրանսերէնը, որովհետև երկուսն էլ Ռուսաստանում դժբաղդաբար շատ են պահանջուում։ Մենք Դորպատում մի հրաշալի պրոֆեսսոր ունենք ռուսաց գրականութեան համար. ես ջանասիրութեամբ այցելում եմ նորան և նրա մօտ շատ բան թարգմանում եմ ռուերէն. նրա անունն է Բոսբերգ, Օդեսսայից։ Քո Տփխիսից հաղորդածը մեր հայրենակիցների վերաբերմամբ ինձ չափազանց տխրեցրեց և հաստատեց իմ առաջները այդ մասին արտայայտած խօսքերը. բնական է, դա մի տխուր իրողութիւն է։ Որոմն իշխում է ոսկէ դահի վրայ, և յօգուտ ժողովրդի արած բուժիչ առաջարկներին ոչ ոք ականջ չէ դնում։ Լսում եմ այն հոգի ու սիրտ մաշող մեղքերի մասին, որ դու քո նամակում նկարագրել ես։ Ես միայն այսքանը կ'ասեմ, որ կը գայ ժամանակ, երբ ամեն բան իր վերկութեամբ դատաւորի սեղանի առաջը կը կանգնի և կը ստանայ իր արժանի պատիժը։ Դու ասում ես՝ «ես պիտի տուն և հայրենիք թողնեմ և ուրիշը փնտրեմ», սրանից ես կարող եմ հետևեցնել, թէ որքան անտանելի է քեզ քո շրջապատը. բայց ասա ինձ, Ապովեան, մի՞թէ մեր յետնորդների ազնիւ զգացող սիրտը նզովքի կնիք չի դնի մեր հայրենիքից հերձուելու վրայ։ Իհարկէ, մեզ անկարելի է թուում մի լաւ բան մեր ժողովրդի մէջ տարածելը, բայց պէ՞տք է սրա համար յուսահատուել։ Ո՛չ, պատասխանում է ինձ իմ բանականութիւնը։ Մենք տեսնում

ենք, սիրելի Ապովեան, որ իւրաքանչիւր բեֆորմատոր մարդկային պատմութեան մէջ շատ բաների դէմ ստիպուած է եղել կուռել, չնայած որ շատերը կարճատեսների կատաղութեանը ստիպուած են եղել հպատակուելու։ Ուրեմն ցոյց տանք մենք մեր համբերութիւնը և խոհեմութիւնը ամեն անախորժութեան առաջ, յուսալով, որ կը գայ լաւ ժամանակ, երբ աչքը աւելի պարզ կը տեսնի ճշմարտութիւնը և սիրտը աւելի ուժգին կը զգայ բարին և գեղեցիկը։ Ես կարծում եմ՝ երախտագէտ յետնորդները մեզ կը գնահատեն և մեզ վրայ կը նայեն զարմացած հայեացքով, որպէս հայրենեաց մաքուր սիրոյ գովելի օրինակների վրայ։

Ես քեզ կը խնդրէի միշտ իմ հայրական տունը, որպէս երկրորդ ես, յաճախ այցելէիր և մերոնց մխիթարէիր, ինչպէս և եղբօրս ապոհովացնէիր իմ դրութեան մասին, մանրամասն հաղորդելով այժմեան իմ հանգամանքները։ Ութ օրից յետոյ մտադիր է իմ յարգելի հայրենակից բժշկութեան դոկտոր Զուբալովը Պետերբուրգի վրայով Տփխիս գալու։ Ես խնդրում եմ քեզ նրան ընկերաբար ընդունել և քո սէրն ու բարեկամութիւնը ընծայել, որպէս գերմանական զգացումների տէր մի մարդու։

Ես ցանկանում եմ այս ամսի 12-ին գիւղը գնալ պարոն Արնոլդի մօտ, որից արդէն վաղուց հրաւէր եմ ստացել։ Քո պատուիրած ողջոյնները հաղորդել եմ քո ընկերներին և նրանցից կրկին շատ ողջոյններ ունեմ քեզ ուղարկելու։

Ողջ եղիր, յիշիր քո
սրտանց անձնուէր
ընկեր Նազարեանցին։

Դեկտ. 5-ին 1836.
Դորպատ.
Պ. Զիզելի տունը։